

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

ԱՐԴՅՈՔ ՀԱՅԵՐՆ ԱՊՐԵՂ ԵՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅՈՒՄ Մ.Թ.Ա. 12-ՐԴ ԴԱՐԻՑ ԱՌԱՋ

1. 19-րդ դ. և 20-րդ դ. առաջին տասնամյակներին տարածված էր այն կարծիքը, որ մ.թ.ա. 13-րդ դարի վերջերին և 12-րդ դ. սկզբներին հայերն ի թիվս մյուս «ծովի ժողովուրդների», հավամաբար փոյուզացիների հետ Փոքր Ասիա են եկել Բալկանյան թերակղզուց և այնտեղ ապրել մինչև մ.թ.ա. 6-րդ դարը՝ ավելի ուշ բնակություն հաստատելով պատմական Հայաստանի տարածքում: Հետագայում մի շարք փաստերի և վերլուծությունների շնորհիվ այս տեսակետը փոխվեց: Ընդգրտումներ եղան նաև այն առիթով, որ հայերը բնակվել են պատմական Հայաստանի արևմտյան մասում արդեն մ.թ.ա. 12-11-րդ դդ.: Մինչդեռ այս տեսակետի մեջ հաշվի չեն առնվել գոյություն ունեցող որոշ փաստեր: Ամիրաժեշտ է այս տեսակետը վերանայել, քանի որ հայերը Առաջավոր Ասիայում հայտնվել են միայն 13-րդ դ. վերջին կամ 12-րդ դ. սկզբին:

2. Այս առումով դժվար է պատասխանել, օրինակ, հետևյալ հարցերին. ա) պատահակա՞ն է արդյոք ակկադական թագավոր Նարամ-Սուենի՝ 3-րդ հազարամյակում նշվող արձանագրության մեջ առկա *Armanam*^{ա)}, *Armanim*^{բ)} և Էբլայի արձանագրության մեջ հանդիպող *Arme*^{գ)} ձևերի բացահայտ մասնությունը ուրարտերեն *Arme* և Դարեհի Բիհիստունի արձանագրության մեջ եղող *Armina* ձևի հետ, բ) ինչո՞ւ հայերը չեն հիշատակվում ծովի ժողովուրդների թվում, գ) արդյոք հայերը մո՞տ են փոյուզացիներին, ինչպես կարելի է ենթադրել անտիկ հեղինակների վերլուծությունների հիման վրա, և եթե այո, ապա գիտությունն այսօր ինչո՞ւ չի հայտնաբերել հայերենի և փոյուզերենի միջև լեզվական մեկ ճյուղի մեջ ընդգրկելու ցեղակցային մերձավորություն:

3. Մ.թ.ա. 14-13-րդ դդ. խեթական արքայությունում հիշատակվում է Հայասս երկիրը, որը իրենից ներկայացնում էր կարևորագույն ռազմական ուժ խեթական պետության հարավարևելյան սահմաններում: Հայասայում բնակվող ցեղերի մասին երեք տարբեր կարծիք կա. ա) Հայասայի բնակիչները հայերի նախնիներն են, և նրանց երկրի անունն էլ պահպանվել է հայերի անվան մեջ (Կ. Ռոտ, Է. Ֆոռեր, Պ. Կրեչմեր, Գ. Ղափանցյան և ուրիշներ), բ) հայասացիները հայերի հետ ոչ մի ընդհանուր բան չունեն, և հայերի ինքնանվանումը՝ *հայ*, ծագում է *Haie* ձևից (Ի. Դյակոնով), գ) հայասացիները խոսում էին խեթալուվական լեզվով, որը

կազմում է հայոց լեզվի ենթաշերտը (Գ. Ջահուկյան): Հայասական հատուկ անունների բնությունը մղում է հեղինակին եզրակացնելու, որ Հայասայի հիմնական բնակիչները հայեր են եղել:

Հայասական բառերի ցանկում պահպանված են մոտ 40 անուններ անձնանուններ, ղիցանուններ և տեղանուններ, որոնք հնչյունաբանորեն միջանկյալ տեղ են զբաղեցնում հնդեվրոպական ձևերի և հայերենի բարբառներում հանդիպող ձևերի միջև: Նույնիսկ այս դեպքում հեղինակը մնում է այն կարծիքին, որ բն խեթալովական, խուռական և, հավանաբար, այլ լեզուների տարրերի գոյությունը հայասերենի հատուկ անուններում բավարար փաստարկ չէ՝ ապացուցելու այդ լեզուներով խոսող ցեղերի առկայությունը (որանք կարող էին լեզվական շփումների և փոխառությունների արդյունք լինել), այդուհանդերձ, հայոց լեզվի տարրերի առկայությունը կարելի է բացատրել միայն հայկական ցեղերի առկայությամբ: Ստորև տալիս ենք այդ կարգի որոշ զուգահեռ ձևեր՝ հ.-ե. համապատասխան ձևերի հետ:

1. **Տեղանուններ.** հայաս. *Hay (asa)* (խեթալովական տեղանվանական - *asa*) - հայ. *հայ* < հ.-ե. **poti* - «տեր», հայաս. *Az(z)i* - հայ. ազ- «չոր» (Ազորդ տեղանվան և կրկնական ազագիլ «չորանալ» և ազագում «չորանալը» ձևերում) < հ.-ե. **az-gh* - (**as*- «այրել, վառել» արմատից. հմմտ. հուն. *ἀξος* «չոր», *ἄξιον* ջրանվան մեջ), հայաս. *Arziya* - հայ. *արծ*- (արծաթ, արծարծել, արծնել բառերում, այլև *Արծակ, Արծափ, Արծն, Արծկե* տեղանուններում. *Arziya*-ն հանդես է բերում համապատասխանություն *Արծն*-ի հետ) < հ.-ե. **arg*- «սպիտակ, պայծառ՝ վառ», հայաս. *Ingalawa* - հայ. *ընկալ, ընդ-կալ* (ընդկալու բայում, բրբռ. «փակել», աորիստի 3-րդ դ.՝ *ընկալալ*) **anti* + **gw* - < հ.-ե. **geu*- «ընկնել, թեքել») կամ անգղ (եթե *Ingalawa*-ն համապատասխանում է Անգղ անվանը), հայաս. *hila* (*Labiṛhila* անդանվան մեջ, հմմտ. խեթ. *Ḫaršanhila, Lumanhila, Paršanhila* և այլն, *Ḫilama, Ḫilamatiya*, ընդհուպ *Ḫulaniya, Ḫulanta, Ḫulina, Ḫularu, Aparḫulu* և այլն, հնարավոր է, որ խեթ. *hila*- «բակ» բառը փոխառություն է հայերենից) - հայ. *հիլ, հեղ, հիւր, խտլ* (< **kuu-lo*- (< հ.-ե. **keu*- «ծածկել»):

2. **Անձնանուններ.** հայաս. *Aišiya* - հայ. *այծի* «այծ, նոխազ» < հ.-ե. **aig'iya*, **aig*-ից. հմմտ. *այծ*), հայաս. *Aniya* - հայ. *հանի* «նախապապ» (> վրաց. *hani* «նախապապ»), հետագայում՝ «տատ» (< [H]aniya), հայաս. *Mariya* - հայ. *մարի* «էգ բռնուն» (< **m̥ri-ya* կամ **m̥riya*-, որը հնարավոր է, փոխառված է խուռ. *Marianni* «իշխող, տեր», ուրարտ. *mare* «ազնվական, տանուտեր». հայասական բառը նույնությամբ պետք է ծագած լինի նույն աղբյուրից:

3. **Ղիցանուններ.** հայաս. *Teritituni* - հայ. *երի* < հ.-ե. **tru*- «երեք» տառում «պոչ, ագի» (**ertun*) «եռագի», հայաս. *Sililil* - հայ. *սիլեղ* «սիրեկան» (< **kei-i*- < հ.-ե. **kei*- «սիրել, սիրեցյալ», հայ. *սէր, սիրելի* արմատի սկզբնաղբյուրը):

4. Տարբեր ուսումնասիրողներ, այն է՝ Գ. Ղափանցյան, Տ. Շուլտհայս,

Գ. Ջահուկյան, Ջ. Գրեպին, հայերենում բացահայտել են որոշ փոխառություններ խեթալուվական լեզուներից, որոնք չեն կարող բացատրվել միայն խեթալուվական լեզուների և հատկապես հիերոգլիֆյան լուվերենի ազդեցությամբ, և որոնք պահպանվել են մ.թ.ա. 12-րդ դ. եետո: Բոլորովին վերջերս մեզ հաջողվեց ցույց տալ խեթերեն որոշ բառեր, որոնց աղբյուրը կարող է հայերենը (resp. հայասերենը) լինել: Բոլոր այդ փաստերը ցույց են տալիս հավանական, ուղիղ կապը հայերի և խեթալուվացիների միջև մ.թ.ա. 12-րդ դ. առաջ:

Հայերեն հետևյալ բառերի աղբյուրը կարող է խեթալուվական լեզուները լինել. **քռուտ, քրտեայ** «կավից պատրաստած», **քրտին** (բրբռ.) խեթ. քրտ «կավ», **ծուխ, ոյ** – խեթ. տիխս(wa)i- «ծուխ» (?), **դանդիմ** «զերեզմանային մթություն» (կամ «հոտածություն» ?) – խեթ. dandu- «մահ», **գորգ** – խեթ. kurka- «ծածկոց», **հատ-անել** – խեթ. hatai «կտրել», «կտրատել, զատել», **կշտամբել** (կշտամբ' կուշտն բառի գործ. հոլովի ձևը) «հանդիմանել, կշտամբել» – խեթ. kušduwai- «կշտամբել, հանդիմանել», **փախ, փախնուլ** – խեթ. parh- «փութափել, խույս տալ», parhau- «խուսափել», **փշուր** – խեթ. paršulli «փշուր, կտոր»; **շեղջ** (*selyo-) «(հացահատիկի) կույտ» – խեթ. šeli- «(հացահատիկի) կույտ», **խալամ** «անասունի զանգ» (խալամովին «զլխի հետ' գլխով») – խեթ. halanta «զլուխ», **խառն, խառնել** – խեթ. harna- «խառնել», **խողխողել** «խոցոտել, սպանել» – խեթ. hūhū-lia- «(պատերազմում) սպանել» և այլն: Հայ. **Մուշեղ** հատուկ անունը բացահայտ փոխառություն է խեթ. Mursilis ձևից:

Հետևյալ դեպքերում խեթերեն բառերի աղբյուրը կարող է հայերենը լինել. հայ. **արտ** «ղաշտ» (< *արծ- < *ածր- < հ.-ե. *agros – խեթ. arsiya «մշակված հող», լուվ. arziyāssi- «(հողամասի անուն' կապաղովկյան տեքստերում)», հայ. **ասր** «քուրդ, բրդեղեն» (< հ.-ե. pokur) – խեթ. ersi- (ešsari-) «քուրդ, բրդեղեն», հայ. **հաց** «հաց (ուտելիք)» (pok^Wtu – < հ.-ե. *pek^W-) – խեթ. haz(z)it/da- (մի տեսակ խմորեղեն), հայ. **լուծ** «լուծ, քաշ, քաշելը, ծանր աշխատանք» (< հ.-ե. *yugom) – խեթ. luzzi – «հարկադիր աշխատանք» և այլն:

Խեթալուվական-հայկական հակադարձ փոխառությունների հետ միասին խեթական տեքստերում կան զգալի թվով հատուկ անուններ, որոնք ունեն ակնհայտ հայերեն համապատասխանություններ և որոնք վկայում են Փոքր Ասիայում և նրա արևելյան շրջաններում հայերի գոյության մասին: Այն ենթադրությունը, թե հայ. **շանթ/դ** (*kwn̄ti- < հ.-ե. *keu- «փայլել, պայծառ») և **լոյս**, սեռ. լուսայ (հ.-ե. *leuk-) բառերը կազմում են Փոքր Ասիայի Santas և Lušiti- դիցանունների հիմքը, հավանական է, եթե Zanduz'a դիցանունն ունի Sand- արմատը, ինչպես ենթադրում է Է. Լարոշը (1947), ուստի կարող է վերականգնվել հայ. **շանթոց** բառը: Թվում է, որ հետևյալ դիցանունները նույնպես ունեն հայկական ծագում. Andaliya (Յամալի' Երկրի աստված) – հայ. **անդ** «ղաշտ» (հ.-ե. *andh-), **անդել** «մշակել, վարել», **Huzziya** – խուց (*khu- sko- < հ.-ե. *(s)keu-

«ծածկել»), Šulluta – հայ. շողտա «փայլուն» < շող (kuol- < հ.-ե. *keu- «փայլել, պայծառ»), Zukki – հայ. ձուկ-ն (հ.-ե. *għu-) և այլն:

Հետևյալ հատուկ անունները կարող են ունենալ հայկական ծագում. Aliwaša – հայ. աղուես, -ու < հ.-ե. *allōpeku-, Anni (հմմտ. հայաս. Anniya), Arziuta – հայ. արծիւ, արծուի < հ.-ե. *rǝʾipio- հայերեն բառը փոխառվել է նաև ուրարտերենում (Aršibedini – Աստված), վրացերենում (arāwi «արծիվ») և կովկասյան այլ լեզուներում, Tatta – հայ. քաթ բառը, ինչպես նաև Թա հատուկ անունը (նաև՝ Թաթիկ, Թաթուլ) և այլն:

Խեթական տեքստերի տեղանուններում նույնպես հայկական շերտը զգալի է: Բացի այդ, վերոհիշյալ հայ. շանթ/դ և լոյս, սեռ. լուսյ, որ հանդիպում են որոշ տեղանուններում՝ հիմնականում հանդիպում են համապատասխան դիցանուններում (Šantasara, (Šantima, Tapasanta, Zarasantiya, Luša, Lušna, Tapiluša, Zihluša), կամ շատ զուգահեռներ ջրանունների, լեռնանունների և այլ կարգի տեղանունների մեջ՝ հիմնված հայ. հասարակ գոյականների վրա (հատկապես, երբ վերջիններս ունեն հ.-ե. ծագում) կամ նրանք, որոնք փոխառություն են հայերենից:

Ջրանուններ. Alt/da, Alt/dani – հայ. աղտ «կեղտ» (*l-d < հ.-ե. *el) կամ աղտ (հ.-ե. *sal-d-), Anza/i – անց «ջրային անցում՝ ջրանցք», Ušli – հայ. տղղ «ջրհեղեղ» (հ.-ե. *pel-), Wettihū – հայ. գետ (հ.-ե. *wed-, նախքան *w>g հերթագայությունը) և այլն:

Լեռնանուններ. Kapakapa – հայ. կապ «ժանգոյց, կոտ միացում. հաղորդակցում», կապան «անցում, բրբռ. կապ(ակ)ապել «կապել», Kama, հայ. քար, հոգն. քարիք (հ.-ե. < *kar- կամ *(s)ker- ?), Kuntiya – հայ. կումտ/դ «ճաղատ» (հ.-ե. *(s)ken-d-, Šunara – հայ. սնար «լեռան գագաթ. ծոծրակ, բարձ» (*սունար) և այլն:

Բնակավայրերի անուններ. Alatra – հայ. աղալ (կա հայ. Աղորիք տեղանունը՝ հետագա աւ > օ անցումով), Ankaliya – հայ. անգղ (հմմտ. հայ. Անգղ, Անգեղտուն տեղանունները), Artus, Artuk – հայ. արտ, -ոյ (հ.-ե. < *agros), Aruna – հայ. արիւն (հ.-ե. esr-, հմմտ. հայ. Արուն, Արունի, Արունք տեղանունները), Həzka – հայ. հաց (pok^Wti- < հ.-ե. *pek^W-, հմմտ. հայ. Հացիկ, Հացկնի տեղանունները), Karkar – հայ. կարկառ «քարակուտակ», Katarka – հայ. կատար «գագաթ, կատար», Kawama – կառամ «առվի հուն՝ ջրանցք, փոս» (< հ.-ե. *geu-?), Palapalaša – հայ. պղպղաքար «մեծ քար» (< հ.-ե. bel-), Tala – հայ. քաղ «շրջան, թաղամաս», Tuḫriya – հայ. թուխա, Urma – հայ. որմն «պատ» (*ork-m- < հ.-ե. *arek- ձևի միջոցով ?), Zunaḫara – հայ. ձիւն(ա)հար «ձնածեծ» < ձիւն (հ.-ե. *għiiōm) և հար-ու «ծեծել» (< հ.-ե. *per-) և այլն:

5. Հայերենը փոխ է առել խոտերնից հետևյալ բառերը. անագ (խոտ. anag, ասուր. anaku և շում. niggi, naggu ձևերի միջոցով), խնձոր (խոտ. ḫinzuri), նուռ (խոտ. nūranti < ակկադ. nurimdu) և այլն: Հնարավոր է որոշակի կապ ենթադրել խոտ. ḫai – «փոքր» (բուն խոտ. zugi «փոքր» ձևի միջոցով) և հայ. հայկ «փոքր» ձևերի միջև:

6. Հայերենում կարող է առանձնացվել մի որոշակի շերտ, որի հետքերն

ուղղակիորեն կամ անուղղակի ծնով գտնում ենք աքքադերենում: Հաշվի առնելով այն փաստը, որ հին ակկադերենը ոչ մի ազդեցություն չի ունեցել հայերենի վրա, մենք կարող ենք նշել ակկադա-հայկական շփումների ժամանակաշրջանը՝ մ.թ.ա. 20-7-րդ դդ.: Կարող է առանձնացվել փոխառությունների երկու սկզբնաղբյուր. ակկադյան գաղութները, որոնք գոյություն ունեին Փոքր Ասիայում: Հատկապես այդ երկու գաղութները պետք է լինեին ազդեցիկ այն ժամանակ, երբ գոյություն ունեւ Հայաստ երկիրը: Եվ սա կլինի հավանական, եթե **Կամախ** հատուկ անունը ենթադրաբար հաստատվում է հայաս. *Kaml* բառում, որն իրոր ծագում է ակկադ. *kima-h(h)u(m)* (*gimahu*) «գերեզման» բառից (Կամախում հայկական թագավորների գերեզմաններ կային), ինչպես առաջարկում է Հ. Աճառյանը (2, 605): Այս բառը պահպանվել է հայ. **կմախ-ք** և **կմախի-ք** «հուղարկավորություն, լացուկոծ» բառերում: Հայերենում գոյություն ունեցող ակկադական այլ փոխառություններից արժե նշել հետևյալները. **անաթ** «անոթ, կահույք, գործիք, զենք» (մասուր. *anatu(m)* < *anutu(m)*, *enutu(m)* «գործիք, սարք, ունեցվածք, կահույք»), **զազաքն** (ակկադ. *k/qazqadu(m)* «զուլփ, վերին մաս», **կնիք** (ակկադ. *kaniku(m)* «կնքված փաստաթուղթ»), *kusu(ku(m)* «կնիք», **կշիռ** (ակկադ. *gisritu(m)* «կշիռ, կշեռք»), **փախ** «փոխ առնել» (ակկադ. *pūh(m)* «փոխառություն, փոխարինում») և այլն:

Կամ որոշ հայերեն փոխառություններ ակկադերենում: Ակկադերենում ծիրանի և ծիրանենու համար կա *armatnu(m)*, որն ակնհայտորեն հանգում է, տաճում է դեպի հայկական ցեղերի անվանումը (հմմտ. ասուր. *hazzu-ra armatnāya* «հայկական խնձոր» բառը ծիրանի համար): Եթե հայ. **խառ** բառը հանգում է **khu-sko-* < *h.-ե.* *(*s*)*keu-* «ծածկել» (հմմտ. նաև **խաղ** < **khu-lo-*) և **քողկ-ր** *h.-ե.* **bhel-* արմատին, որը նաև **քող(իկ)** և **քողոջ** ձևերի հիմքն է, ապա հնարավոր է ենթադրել, որ դրանք փոխառություն են ակկադերենում. *hussu(m)* «(հյուղակ» և *pugla* «բողկ» (հմմտ. արամ. *pugla*):

7. Որոշ հին հնդկական փոխառությունների առկայությունը խուռերենում գիտնականներին բերում է այն ենթադրությանը, որ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին հնդկական ցեղեր են ապրել Առաջավոր Ասիայում: Սա վիճելի կարծիքների տեղիք տվեց (հմմտ. *Mayrhofer, 1966, Kammenhuber, 1968, Дьяконов, 1970, 39-63, Mayrhofer, 1974*): Վերոհիշյալ փոխառությունները, կապված հայաս. *Mariya*, խուռ. *marianne* «ազնվական» և ուրարտ. *mare* «ազնվական» ձևերի հետ, պատկանում են այս տիպին: Եթե հայասերենը մի այնպիսի լեզու էր, որտեղ թափանցել են հին հնդկերեն բառեր, ուրեմն Հայաստան հայկական ամենահին պետությունն է, հայերեն այն բառերը, որոնք հանգում են հին հնդկերենին, պետք է պահպանված լինեն իրանականից անկախ: Այդ բառերից է, առաջին հերթին, հայ. **մարմին** (հինդկ. *marman* – «մարմնի մաս») ծագած *h.-ե.* **mel*. **l* > *r* փոխառությունը բնորոշ չէ հայերենին): Հայ. **ջամբ** «մթերք» և **ջամբել** «մթերել. կերակրել» բառերը նույնպես պետք է ընդգրկել այս խմբի մեջ (հմմտ. հինդկ. *jambhaṭe* «կծել»): Այս

խմբին են պատկանում նաև այն բառերը, որոնք, ըստ Վ. Պորցիգի, փոխառվել են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին, Սև ծովի հյուսիսային ափին:

8. Քարթվելական լեզուների նշանավոր մասնագետ Հ. Ֆոգտը գտնում է, որ ընդհանուր քարթվելերենում և վրացագաներենում չեն եղել ընդհանուր արմենիզմներ, համապատասխանաբար հայերի և քարթվելների միջև ոչ մի կապ չի եղել այդ ժամանակաշրջանում, և հայերը դեռ բնակվում էին Կովկասից դուրս: Լեզվաժամանակագրությանը նվիրված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընդհանուր քարթվելերենը բաժանվել է մոտավորապես մ.թ.ա. 19-րդ հարյուրամյակում (Климов, 1964, 85): Ավելի մանրամասն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ֆոգտի պնդումը բավականին թույլ է:

Կան որոշակի թիվ կազմող բառային առնչություններ հայերենի, վրացերենի և զաներենի միջև, որոնք մասամբ կարող են առնվազն վերագրվել 19-18-րդ դդ.: Կան նաև փոքր թիվ կազմող բառեր, որոնք ընդհանուր են հայերենում, վրացերենում, զաներենում և սվաներենում, սակայն անհնար է համոզիչ կերպով նշել շրջանը, ընդհանուր քարթվելերենի վերջին ժամանակաշրջանը, այսինքն՝ մոտավորապես մ.թ.ա. 19-րդ դդ.:

Ամենից առաջ նշենք հայերենի և վրացա-զաներենի համար ընդհանուր բառեր: Առաջին շերտը բաղկացած է բնիկ հայերեն բառերից, որոնք անցել են վրացա-զաներենին (վրացերենին և զաներենին). հայ. **արծաթ** (հ.-ե. *arg'oto- ?) – վրաց. *werc¹x], նաև ավար. harac, լախ. arcu, դարգ. arc, տաբաս. ars, արչ. ars (we-ի համար հմնտ. հայ. **ործ**, յործ և վրաց-զան. *werd² «եղանակ»), հայ. **բուրդ** և **բրդել** «կտրատել» (հ.-ե. *bherdh-) – վրաց.-զան. *burdʒa – «փետուր(ներ)», հայ. **զինի**, սեռ.՝ **-այ** (հ.-ե. *winiyo-) – վրաց.-զան. *γwino- «զինի», հայ. **որբ** սեռ.՝ **-այ** (հ.-ե. *orbho) – վրաց.-զան. *oboe, նաև արխ. -iba, կար. ibe, չնչ. bo, «որբ», հայ. **ործ**, յործ, – վրաց.-զան. *werd³ «եղանակ» և այլն:

Հայ.-վրաց.-զան. բառային զուգադիպումների երկրորդ շերտը կազմում են վրացա-զանական փոխառությունները հայերենում. վրաց., զան. *con- «կշռել» – հայ. **ծանր**, սեռ.՝ **ծանու**, վրաց.-զան. a¹ebo – «ստնձեղ, կպցնել», a¹ebo – «ստսինձ» – հայ. **ծեփ**, սեռ.՝ **-այ** «ծովում», վրաց.-զան. *krt-wn «փնտրել (կտուցով՝ ինչ-որ բան)», ni-kart «կտուց» – հայ. **կտուց** և այլն:

Հայ-քարթվելական զուգադիպումներում կան մի քանի փոխառություններ, այն է՝ հայերենից քարթվելերենում. հայ. **արծիւ**, **արծուի** (հ.-ե. *rg'ipiyō-) – վրաց., զան., սվան. arāwi, նաև չնչ. arzu, ինգուշ. arzi և ուրարտ. Arābini, հայ. **տիգ** «միջատ» (հ.-ե. *digh-) – քարթ. *tiz¹- «լու, ոջիլ» (վրաց. til-, մեգր. ti(j)-, ճան. mti-, սվան. tiš-:

Հայ-քարթվելական լեզվական առնչությունների հավանականությունը Հայաստանի ժամանակաշրջանում, եթե հաշվի ենք առնում Հայաստանի աշխարհագրական դիրքը, ավելին է: Լուվ. ṽdawi- բառը հավանաբար փոխառություն է քարթվելական աղբյուրից. վրաց. twal-, մեգր., ճան. tol-, սվան. te-/ter- «այք»:

Գրականություն

- * Հոդվածն անգլերեն լեզվով տպագրվել է "When Worlds Collide: Indo-Europeans and Pre-Indo-Europeans" (Michigan, 1990, pp. 25-33) համադեսում, և նկատի ունենալով հոդվածի կարևորությունը՝ տպագրում ենք այն հայերեն թարգմանությամբ:
- Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1971 - 1979:
- Ջահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1970:
- Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1987:
- Джаукян Г.Б., Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Изд-во АН АрмССР, Ереван, 1964.
- Дьяконов И.М., Предыстория армянского народа, Изд-во АН АрмССР, Ереван, 1968 (վերահրատ. The Pre-history of the Armenian People, Delmar, New York, Caravan Books, 1984):
- Капанцян Г.А., Хайаса — колыбель армян, Этногенез армян и их начальная история, Изд-во АН АрмССР, Ереван, 1946.
- Климов Г.А., Этимологический словарь картвелских языков, Изд-во АН СССР, Москва, 1964.
- Del Monte G.F., Tischlerei, Die Orts-und Gewdssernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978:
- Jahukian G.B., The Hayasa Language and its Relation to the Indo-European Language, "Archiv orientalni", 29, 1961:
- Forrer E., Hayasa-Azzi, "Caucasica", 9, 1931:
- Friedrich J., Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1952:
- Ghapantsian G.A., Chetto-Armeniaca, Yerevan. 1931-1933:
- Greppin J.A.C., Hitt. -z(a), Arm. z-, and the Theory of Armeno-Hittite loan words, "Journal of Indo-European Studies", 3, 1975:
- Greppin J.A.C., Armeno-Luvica, "Revue des etudes armeniens", 13, 1978:
- Greppin J.A.C., Hittite Loan Words in Armenian, "Lautgeschichte und Etimologie", Wiesbaden, 1980:
- Kammenhuber A., Die Arier im Vorderen Orient, Heidelberg, 1968:
- Kretschmer P., Der nationale Name der Armenier Haikh, Anzeiger der Akad. der Wiss. in Wien. Phil.-hist., Klasse 1-7. 1932:
- Laroche E., Recherches sur les noms des dieux hittites, Paris, 1947:
- Laroche E., Dictionnaire de la langue louvite, Paris, 1959:
- Laroche E., Les noms des Hittites, Paris, 1966:
- Mayrhofer M., Die Indo-Arier im alten Vorderasien, Wiesbaden, 1966:
- Mayrhofer M., Die Arier im Vorderen Orient-ein Mythos?, Wien. 1974:
- Schultheiss T., Hethitisch und Armenisch, KZ, 77, 1961:
- Tischler J., Hethitisches etymologisches Glossar, 1-3, 1977-1988:
- Vogt H., Armenien et Caucasiq du sud, "Norsk Tidsskift for Sprogvidenskap", 9, 1937:
- Vogt H., Arménien et Géorgien, "Handes amsoareay", 75, 1961:
- Zgusta L., Kleinasiatische Personennamen, Prague, 1964:
- Zgusta L., Kleinasiatische Ortsnamen, Heidelberg, 1984:

Жили ли армяне в Передней Азии до XII века до н.э.?

Резюме

На нынешнем этапе развития науки данный вопрос нуждается в более точном освещении. Новое исследование отдельных слоев армянского и некоторых контактировавших с ним языков показывает, что эти контакты были не односторонними, а взаимными.

Новый сравнительно-этимологический анализ соответствующих фактов данных хеттских источников о стране Хайаса свидетельствует о том, что не только армянский заимствовал значительное число слов из хетто-лувийских языков, но и источником определенного числа хеттских слов мог быть армянский. Это противоположные заимствования, тем более, что в топонимах (гидронимы, оронимы, названия населенных пунктов) хеттских текстов армянский слой значителен.

Армянский язык заимствовал некоторое число слов из хурритского. В армянском может быть выделен определенный слой, следы которого прямо или косвенно ведут к аккадскому языку.

В Передней Азии индийские племена жили в середине 2-го тысячелетия до н. э., и если хайасский язык, в который проникли древнеиндийские слова, то Хайаса - древнейшее армянское государство и те армянские слова, которые восходят к древнеиндийскому, должны были сохраняться независимо от иранского.

Новое исследование контактов между армянскими и картвельскими языками показывает, что эти контакты также были двухсторонними. Возможность армяно-картвельских языковых контактов была более значительной, чем можно было предполагать до сих пор относительно эпохи Хайасы, если принять во внимание географическое положение Хайасы.

G. DJAHUKYAN

Did Armenians Live in Asia Anterior before the XII c. B.C.?

Summary

Views on this problem need more precise elucidation for present-day science. Study of some contacts of some layers of Armenian with other languages reveals the reciprocal character of these contacts.

Data from Hittite sources about the country Hayasa (toponyms, theonyms, anthroponyms) and newest comparative-typological analyses show that not only Armenian has borrowed words from Hittite-Luvian languages, but also some Hittite words could be dated back to Armenian origins (hydronyms, oronyms, settlements).

Armenian contains several loans from Hurrian. There is a distinct word layer which goes back to Akkadian.

Indian tribes lived in Asia Anterior in the middle of the II millenium, B.C. Thus, if Old Indian words can be traced in Armenian, then Hayasa is assumed to be the oldest Armenian state and Old Indian loans were preserved in Armenian independently from Iranian contacts.

The study of Armenian and Kartvelian languages contacts reveal higher reciprocity than presumed before, taking into consideration the geographical location of the State of Hayasa.